ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_ _ մարտի 2023 թվականի № -Ա

## «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի դեկտեմբերի 2-ի №436Ա որոշման 2-րդ կետի պահանջի (մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը ոչ բազմաբնակարան շենքերի և, տեխնիկական հնարավորության դեպքում նաև բազմաբնակարան շենքերի, ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը դուրս բերել սահմանազատման կետեր, բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը կնքել հոլոգրաֆիկ կնիքներով, բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների հաշվառման հանգույցներում ուղղել հակառակ տեղադրված ֆիլտրերը և եռակցել կամ անհնարինության դեպքում կնքել ջրամատակարարման ցանցում ոչ պատշաճ ձևով խցափակված գծերը) չկատարման համար Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №498Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) տուգանվել է հինգ միլիոն դրամի չափով,

բ) Որոշման 3-րդ կետով Ընկերությանը պարտավորեցվել է մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ը ոչ բազմաբնակարան շենքերի և, տեխնիկական հնարավորության դեպքում նաև բազմաբնակարան շենքերի, ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը դուրս բերել սահմանազատման կետեր, բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը կնքել հոլոգրաֆիկ կնիքներով, բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների հաշվառման հանգույցներում ուղղել հակառակ տեղադրված

ֆիլտրերը և եռակցել կամ անհնարինության դեպքում կնքել ջրամատակարարման ցանցում ոչ պատշաճ ձևով խցափակված գծերը,

գ) Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի օգոստոսի 23-ի №637-ՀՆ հրամանի համաձայն՝ Ընկերության կողմից 2022 թվականի օգոստոսի 8-ին ներկայացված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման սակագների վերանայման (ճշգրտման) հայտի ուսումնասիրության շրջանակում Հանձնաժողովի, ջրային կոմիտեի և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացված Ծառայությունների մատուցման 2022 թվականի սակագների հաշվարկներում ներառվող փաստացի մանրածախ ջրամատակարարման ծավալների մոնիթորինգի արդյունքում հայտնաբերվել են հաշվառքի սարքերի սահմանազատման կետեր դուրս չբերված 272, հոլոգրաֆիկ կնիքով չկնքված հաշվառքի սարքերի՝ 16 և հակառակ տեղադրված ֆիլտրերի՝ 3 դեպք,

դ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, Որոշման 3-րդ կետով սահմանված պարտավորությունների չկատարման փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2022 թվականի նոյեմբերի 23-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2022 թվականի նոյեմբերի 23-ի №ԳԲ/34.3-Մ2-2/4092-2022 գրությամբ,

ե) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2022 թվականի նոյեմբերի 30-ի №ՄՇ/38273 գրությամբ հայտնել է, որ ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերի սահմանազատման կետ դուրս բերելը ենթադրում է լրացուցիչ ֆինանսական բեռի ավելացում և կապիտալ ներդրումների իրականացում: Ընկերությունը նշել է նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարության, Ընկերության և «Վեոլիա Օ-Կոմպանի Ժեներալ դեզ Օ» ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Վարձակալության պայմանագիր) 5-րդ հոդվածի 5.1 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ի դեմս ջրային կոմիտեի, միջոցների առկայության սահմաններում և, եթե այլ բան նախատեսված չէ Վարձակալության

պայմանագրում, ապահովում է սպասարկման տարածքում գույքի խոշոր նորոգումների, ցանցի ընդլայնման և նորացման ներդրումները: Չնայած դրան, Ընկերությունը նշել է, որ կշարունակի հնարավորինս վերացնել ջրային համակարգում առկա բոլոր խախտումները, սակայն կապիտալ հիմնանորոգման ներդրումային ծրագրերը Վարձակալության պայմանագրի շրջանակում պետք է կատարի ջրային կոմիտեն: Բացի այդ, նույն գրությամբ Ընկերությունը Հանձնաժողովին խնդրել է տրամադրել հայտնաբերված խախտումների հասցեական ցանկը՝ ամբողջական և լիարժեք դիրքորոշում հայտնելու նպատակով, որին ի պատասխան Հանձնաժողովը 2022 թվականի դեկտեմբերի 12-ի №ԳԲ/34.3-Մ2-2/4312-2022 գրությամբ տրամադրել է համապատասխան ցանկը,

զ) հայտնաբերված խախտումների հասցեական ցանկի վերաբերյալ Ընկերությունն իր փաստարկները ներկայացրել է 2023 թվականի փետրվարի 21-ի №ՄՇ/4542 գրությամբ, որոնց ուսումնասիրության համար պահանջվող լրացուցիչ ժամանակի անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովը 2023 թվականի փետրվարի 23-ի №56-Ա որոշմամբ Որոշման 3-րդ կետով սահմանված պահանջի չկատարման ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը երկարաձգել է մեկ ամսով,

է) Հանձնաժողովը 2023 թվականի փետրվարի 28-ի №ԳԲ/34.3-Մ2-2/659-2023 գրությամբ Ընկերությունից պահանջել է հնարավորին սեղմ ժամկետում ներկայացնել 2023 թվականի փետրվարի 21-ի №ՄՇ/4542 գրությամբ նշված խախտման դեպքերի փաստարկները հասցեական ցանկով՝ յուրաքանչյուրի մասով համապատասխան հիմնավորումներով, որին ի պատասխան Ընկերության 2023 թվականի մարտի 6-ի №ՄՇ/5768 գրությամբ ներկայացված լրացուցիչ փաստարկներից ակնհայտ է դառնում, որ հաշվառքի սարքերի սահմանազատման կետեր դուրս չբերված 131, հոլոգրաֆիկ կնիքով չկնքված հաշվառքի սարքերի՝ 16 և հակառակ տեղադրված ֆիլտրերի՝ 3 դեպքերը վերացվել են Որոշմամբ սահմանված վերջնաժամկետից՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ից հետո, իսկ հաշվառքի սարքերի սահմանազատման կետեր դուրս չբերված 41 դեպքում միացումները կատարված են բազմաբնակարան շենքի կանգնակից (ըստ Ընկերության դրանց դուրսբերումը տեխնիկապես անհնար է), 4 դեպքում սնուցող ջրագծերն անցնում են տվյալ սուբյեկտների սեփականություն հանդիսացող տարածքներով, 4 դեպքը ապամոնտաժված կամ ջրազրկված միացումներ են, 25 դեպքերով առկա են

հաջորդական միացումներ (մի բաժանորդի միացման կետը գտնվում է մեկ այլ բաժանորդի տարածքում), իսկ 67 դեպքերում աշխատանքները դեռևս կատարված չեն և ներառված են Ընկերության 2023 թվականի պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրում,

ը) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 3-րդ կետի պահանջը, այն է՝ Հանձնաժողովի կողմից արդեն 3-րդ անգամ սահմանված ժամկետում ոչ բազմաբնակարան շենքերի և, տեխնիկական հնարավորության դեպքում նաև բազմաբնակարան շենքերի, ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերն ամբողջությամբ դուրս չի բերել սահմանազատման կետեր, բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը չի կնքել հոլոգրաֆիկ կնիքներով, ոչ բնակիչ-բաժանորդների հաշվառման ոչ բոլոր հանգույցներում է ուղղել հակառակ տեղադրված ֆիլտրերը: Ինչ վերաբերում է Ընկերության պնդումներին և ներկայացված լրացուցիչ փաստարկներին, ապա դրանք չեն կարող հիմք հանդիսանալ վերջինիս խախտման համար նախատեսված պատասխանատվությունից ազատելու համար: Մասնավորապես, Ընկերությունը չի հիմնավորել նշված պարտավորության կատարման անհնարինությունը, ինչպես նաև չի ներկայացրել դրան ուղղված պատշաճ միջոցներ և ջանքեր գործադրելու հիմնավորումներ: Միաժամանակ հաշվի առնելով, որ նաև իրականացված մոնիթորինգների արդյունքներով է վերջին երկու տարիների ընթացքում Ընկերությունն ապահովել փաստացի մանրածախ ջրամատակարարման ծավալների ավելի բարձր ցուցանիշ, քան բազիսային մանրածախ ջրամատակարարման ծավալների ցուցանիշն է, ինչն ի սկզբանե եղել է Որոշման 3-րդ կետով սահմանված պահանջի նպատակը, վերացել է Ընկերության նկատմամբ լրացուցիչ պարտավորություններ սահմանելու անհրաժեշտությունը, և

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 3-րդ կետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 3-րդ կետի խախտման համար Ընկերությանը տուգանել տասը միլիոն դրամի չափով:

2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005001343 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում և բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
4. Սույն որոշումն սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
…մարտի 2023թ.